ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝
ՆՎԻՐՎԱԾ ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԾՆՆԴՅԱՆ 800-ԱՄՅԱԿԻՆ

Սեպտեմբերի 21-ին Երևանում, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում կայացավ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակին նվիրված հորելյանական հանդիսավոր նիստ, որին ներկա էին մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ բանվորներ, ծառայողներ, գիտնականներ, դրողներ, արվեստագետներ, ուսանողներ։ Նիստին մասնակցում էին նաև եղբայրական Վրաստանից ժամանած հյուրեր։

Հորելյանական հանձնաժողովի նախագահ բանաստեղծ Ռեզամ Սարյանը, բացելով հանդիսավոր նիստը, համառոտակի բնութագրեց Շոթա Ռուսթավելու «Վագրենավորը» պոեմի գաղափարական ու գեղարվեստական այն արժանիքները, որոնք նրան դասում են համաշխարհային գրականության գլուխգործոցների շարքում։ Շոթա Ռուսթավելին,— ասաց նա,— իր մեծ արվեստի շնորհիվ հարյուրամյակներ շարունակ գերել է շատ ու շատ սերունդների, սիրելի դարձել ոչ միայն վրաց, այլև աշխարհի բոլոր ժողովուրդներին։

Բացման խոսքից հետո զեկուցումով հանդես եկավ Նաիրի Զարյանը։

«Վագրենավորը» վիպերգությունը,— ասում է նա,— վրաց բազմադարյան հոգևոր մշակույթի պսակն է, համաշխարհային պոեզիայի գոհարներից մեկը։ Շոթա Ռուսթավելին, հանդես գալով մի ժամանակաշրջանում, երբ Վրաստանը հասել էր իր հզորության ու ծաղկման գագաթնակետին, բանաստեղծական տողերում մարմնավորեց եղբայրության, սիրո, խաղաղության ու երջանկության համամարդկային ձգտումները, և այդ բոլորի շնորհիվ նրա պոեմը ձեռք բերել անմրցելի ժողովրդայնություն։ «Վրաստանի գրականության այդ անգերազանց կոթողը,— շարունակում է զեկուցողը,— անապատում բուսած մի ծառ չէր։ Նրա արմատները խաղված էին այն ժամանակվա Արևելքի զարթոնքն ազդարարող հոգևոր շատ երևույթների մեջ։ Հիշենք Նիզամիի, Նավոյիի և Արևելքի մյուս հսկաների ստեղծագործությունները, Նարեկացու, Շնորհալու երկերը, Վարդան Այգեկցու առակները, հանճարեղ «Սասունցի Դավիթ» էպոսը և այլն»։

Զեկուցման վերջում Ն. Զարյանը խոսեց այն սիրո ու գնահատանքի մասին, որին արժանացել է Ռուսթավելու պոեմը հայ իրականության մեջ։

Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, Երևանի պետական համալսարանի ռեկտոր Մկրտիչ Ներսիսյանը խոսեց ռուսթավելագիտության մեջ հայ բանասերների ներդրած խոշոր ավանդի մասին։ Նա հայտնեց նաև, որ շուտով Երևանի պետական համալսարանում ստեղծվելու է Ռուսթավելու անունը կրող գիտահետազոտական կաբինետ, որը դառնալու է վրաց բազմադարյան գրականության ուսումնասիրության կենտրոն մեր հանրապետությունում։

Հորելյանական նիստում ելույթներ ունեցան նաև հանրապետության ժողովրդական արտիստ, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Էդուարդ Միրզոյանը, վրաց բանաստեղծ Ալիո Միրցխուլավան, Հովհաննես Շիրազը։ Վրաց բանաստեղծ Ռևազ Մարգիանին արտասանեց Շոթա Ռուսթավելու ծննդյան 800-ամյակին նվիրված իր բանաստեղծությունը։

Հանդիսավոր նիստն ավարտվեց Վրաստանի և Հայաստանի արվեստի անվանի վարպետների համերգով։

Ա. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԵԾԱՎԱՍՏԱԿ ՊԱՏՄԱԲԱՆԸ
(Ի. Պ. Կրիպյակևիչի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ եղբայրական Ուկրաինայի մեծավաստակ գիտնական, հանրապետության ակադեմիայի իսկական անդամ Իվան Պետրովիչ Կրիպյակևիչի ծննդյան 80 և գիտական ու հասարակական գործունեության 60-ամյակը։

Մեծ է նրա վաստակը ինչպես Ուկրաինայի, Ռուսաստանի ու Լեհաստանի, այնպես և Ուկրաինայի հայ գաղթավայրերի և հայ-ուկրաինական պատմական կապերի ուսումնասիրության բնագավառում։